ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Մ. Խաչատուրյան (լիազորագիր՝ տրված 24.01.2022թ.),

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Դ. Շախրամանյան, Ս. Սարդարյան (լիազորագիր՝ տրված 24.01.2022թ.),

քննելով Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում 24.01.2022թ. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի համանման բողոքը (25.01.2022թ. վարույթ ընդունված) (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 24.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն բողոքի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2021 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրի ներքո հայտարարվել է բաց մրցույթ Հակակոռուպցիոն շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ Ընթացակարգի):

2. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022 թվականին կազմված թիվ 2-3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի մասով «Հավելվածի 1.2-ի մասով 1-13-րդ, 27-38-րդ, 41-րդ, 81-83-րդ, 92-րդ, 96-րդ, 98-րդ տողերով ներկայացված չեն մոդելները»: Արդյունքում նույն արձանագրության 1. 3-րդ կետի համաձայն՝ «հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել վերը մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022 թվականին կազմված 2-4 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1.1-րդ կետի համաձայն՝ «(...) «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ: Մասնավորապես չեն շտկվել 7, 9, 27-28, 30-33, 36-38, 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին»:

Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (...) հայտը մերժել»:

Բողոքի հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է և ենթակա է վերացման՝ հետևյալ պատճառաբանությամբ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):»

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ներկայացված հայտում թերությունների առկայության դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն՝ ծանուցելով մասնակցին՝ վերջինիս ընձեռելով հնարավորություն սահմանված ժամկետում դրանք շտկելու:

Սույն պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022 թվականին կազմված թիվ 2-3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի մասով «Հավելվածի 1.2-ի մասով 1-13-րդ, 27-38-րդ, 41-րդ, 81-83-րդ, 92-րդ, 96-րդ, 98-րդ տողերով ներկայացված չեն մոդելները», ինչի հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին տրամադրվել է ժամկետ շտկումները կատարելու համար, ինչը սահմանված ժամկետում կատարվել է: Այդուհանդերձ, Արձանագրություն 1.1-րդ կետի համաձայն՝ «(...) «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ: Մասնավորապես չեն շտկվել 7, 9, 27-28, 30-33, 36-38, 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին»: Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (...) հայտը մերժել»:

Հարկ է արձանագրել, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ շտկումները, մասնավորապես, հավելվածի շտկված տարբերակում ներկայացվել են համապատասխան սարքավորումների մոդելները, ինչը և պահանջվում էր 2-3 արձանագրությամբ: Միաժամանակ, ներկայացված մոդելները իրենց տեխնիկական բնութագրերով ունեն առավել լավ նկարագիր, քան այն, ինչ սահմանված էր հրավերով, որպիսի հանգամանքը չի կարող դիտվել որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ թիվ 2-3 արձանագրությամբ բավարար հստակությամբ նշված չեն եղել անհամապատասխանությունները և միաժամանակ նշված չեն եղել այդ անհամապատասխանությունների շտկմանն ուղղված գործողությունները, որպիսի պարագայում 2-4 արձանագրությամբ ընկերությանը խախտումներ վերագրելը եղել է ոչ իրավաչափ:

Նման պայմաններում, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2-3 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով ընդունվել է օրենքի խախտմամբ, հետևաբար այն ենթակա է անվավեր ճանաչման:

Բողոքի պահանջը.

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Գնումների» մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու

հանձնաժողովի նիստի 19 հունվարի 2022 թվականի թիվ 2-4 արձանագրության 1.3 կետով կայացրած որոշումը՝ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «Պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Ի լրումն ներկայացված բողոքի 04.02.2022թ. Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի բողոքի հիման վրա հարուցված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 գործը:

Ի լրումն բողոքի հիմնավորումների՝ գտնում ենք, որ հանձնաժողովի 13/01/2022 և 19/01/2022 թվականի արձանագրությունները անվավեր են՝ հետևյալ պատճառաբանությամբ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հրավերով «սարքերի և սարքավորումների նկարագիր» 1.2 հավելվածի նմուշային օրինակում «մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում» դաշտում սարքավորման մոդելը նշելու պայմանը նախատեսված է «Մոդել /առկայության պարագայում/»:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին հայտ ներկայացնելիս առաջնորդվել է հրավերով սահմանված պայմաններով և թիվ 1.2 հավելվածը լրացրել է դրանում նախատեսված պահանջներով, ուստի մոդել չի նշել այն սարքավորումների մասով, որոնք մոդել չեն ունեցել:

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իր 13.01.2022թ-ի արձանագրությամբ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին առաջարկել է կատարել շտկում թիվ 1.2 հավելվածի մոդելների մասով:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն, առաջնորդվելով գնահատող հանձնաժողովի պահանջով, թիվ 1.2 հավելվածում կատարել է շտկում մոդելները դաշտում, որի արդյունքում ստիպված է եղել փոխարինել հայտը ներկայացնելիս իր կողմից առաջարկված սարքավորումները, որպեսզի կարողանա կատարի պատվիրատուի պահանջը և նշել մոդել /քանի որ ի սկզբանե հայտով ներկայացված սարքավորումները մոդել չեն ունեցել/:

Այսինքն՝ մասնակից «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն ջանք չի խնայել պատվիրատուի պահանջը կատարելու համար, անգամ այն դեպքում, երբ պատվիրատոի պահանջը համարել է ոչ իրավաչափ, սակայն շտկումից հետո անգամ պատվիրատուի կողմից

առաջարկվող սարքավորումները ընդունելի չեն եղել և այդ հիմքով 19/01/2022 թվականի թիվ 2-4 արձանագրությամբ ընկերության հայտը մերժվել է:

Այսինքն՝ գնահատող հանձնաժողովը 13/01/2022 թվականի թիվ 2-3 արձանագրությամբ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի մասով որպես հայտով սահմանված պայմաններին անհամապատասխանություն արձանագրել է մոդելների նշված չլինելը, այն դեպքում, երբ հրավերով մոդել նշելը կրել է ֆակուլտատիվ բնույթ և պարտադիր պայման չի հանդիսացել մասնակցի համար:

Նշվածը հաշվի առնելով՝ հարկ է արձանագրել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ի սկզբանե չէր կարող պահանջել մասնակցից կատարել նման շտկում, քանի որ փաստացի մոդելի վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելով մասնակիցը թույլ չի տվել հրավերով սահմանված պայմանների խախտում, այսինքն՝ նման պայմաններում չէր կարող ծագել շտկման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հիման վրա՝ եզրահանգում ենք, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13/01/2022 թվականի թիվ 2-3 արձանագրությամբ շտկում պահանջելը ոչ իրավաչափ է և դրա հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից շտկում կատարելուց հետո 19/01/2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով նույնպես անհիմն է:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք ի լրումն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի 21/01/2022 թվականի բողոքի հիմք ընդունել նաև վերոբերյալ հիմնավորումները և ի լրումն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի 21/01/2022 թվականի բողոքի պահանջների խնդրում ենք անվավեր ճանաչել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13 հունվարի 2022 թվականի թիվ 2-3 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունից շտկում պահանջելու մասով»:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքը:

2. <u>«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 24.01.2022թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ի շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ նաև՝ Ընկերություն/ մասնակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հրավիրված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգին /բաց մրցույթ/:

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների կատարման պայմանագիր:

Ընթացակարգի շրջանակներում տարածված հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

(...) իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի հավելված 1.2-ի համաձայն՝ դրանում պետք է նշվեր մասնակցի կողմից առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիր, այդ թվում, համապատասխան սյունյակում պետք է նշվեր առարակվող սարքավորման մոդելը /առկայության դեպքում/:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելու նպատակով Ընկերությունը Հավելված 1.2-ում ներառված սարքավորումների ցանկը տրամադրել է ՀՀ-ում դրանց ներմուծմամբ և վաճառքով զբաղվող ընկերություններին, և դրանց կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն լրացրել է Հավելված 1.2-ում նշված սարքավորումների մեծ մասի վերաբերյալ տեղեկատվությունները, այդ թվում՝ մոդելները:

Այնինչ, ըստ համապատասխան սարքավորումներ վաճառող ընկերության տեղեկատվության՝ ցանկում ներառված մի շարք սարքավորումներ անհրաժեշտ էր պատվիրել արտադրողից, ուստի դրանց մոդելներն այդ պահին հնարավոր չէ մատնանշել, քանի որ արտադրողները կես տարին կամ մեկ տարին մեկ արտադրում են նույն հզորություն ունեցող, բայց որոշակի փոփոխված նոր մոդելներ, իսկ մինչ այդ առկա մոդելները հանում են վաճառքից, ուստի մի շարք սարքավորումների մասով մոդել հնարավոր կլինի կանխորոշել միայն պատվերի պահին:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն, որ մոդելները պետք է նշվեին միայն առկայության դեպքում՝ Ընկերությունը Հավելված 1.2-ը լրացնելիս այն սարքավորումների

մասով, որոնց մոդելների վերաբերյալ տեղեկությունները հայտը լրացնելիս հայտնի չի եղել, մոդել չի նշել:

Այս առումով Ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքին, որ Ընթացակարգով նախատեսվում էր մոտ 3 տարվա շինարարական աշխատանքներ, իսկ սարքավորումները պետք է տեղադրվեին աշխատանքների վերջին փուլերում, ուստի հայտի ներկայացման պահին անհնար էր կանխատեսել, թե այն սարքավորումների մասով, որոնք պետք է պատվիրվեն, տարիներ անց հստակ ինչ անվանում կունենան մոդելները:

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 13.01.2022թ-ի ժամը 16:30-ին հրավիրված նիստի 2-3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

(...) «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

Հավելված 1.2-ի մասով

ա) 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

բ) 43-45-րդ, 64-65-րդ և 71-80-րդ տողերով տեխնիկական բնութագրերը ներկայացված են ոչ ամբողջական»:

Հատկանշական է, որ Ընկերության կողմից մոդելներ չեն նշվել նաև մի քանի այլ սարքավորումների մասով, սակայն Հանձնաժողովն այդ մասին որևէ նշում չի կատարել, ուստի նման տարբերակված մոտեցումն առնվազն անհասկանալի է:

Հատկանշական է նաև, որ մրցույթին մասնակցել են թվով վեց մասնակիցներ, և բոլորի հայտերում էլ նշված տողերի սարքավորումների կամ դրանց մի մասի մոդելները նշված չէին:

Ընկերությունը հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված հավելված 1.2-ը, մասնավորապես շտկել է «բ» կետում նշված անհամապատասխանությունը, իսկ սարքավորումների մասով, որոնց մոդելները առկա չէին, նշել է այդ սարքավորումների հզորությունը, քանի որ այդ հատկանիշը թույլ է տալիս ավելի հստակ կանխորոշել անհրաժեշտ սարքավորումը և դրա համապատասխանությունը հրավերում նշված չափանիշներին: Ավելին, մասնակցելով այլ գնման ընթակարգերին,

Հայցվորը բազմիցս այդպես է նշել, և մշտապես նրա հայտերը գնահատվում էին բավարար և նույնիս հաղթող:

Մինչդեռ, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ-ի ժամը 16:00-ին հրավիրված նիստի 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝

«Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապասխանությունները: «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ների, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի և «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ: Մասնավորապես չեն շտկվել.

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

Հավելված 1.2-ի մասով

ա) 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով ներկայացված չեն մոդելները»:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ների, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի և «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

21.01.2022թ-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարը դիմել է Ընկերությանը որպես հայտի ապահովում բանկային երաշխիք տրամադրած «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին՝ բանկային երաշխիքը վճարելու պահանջով:

Բացի այդ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն նախաձեռնել է Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի որոշումները՝ Ընկերության հայտում մոդելների մասով անհամապատասխանություն արձանագրելու և հետագայում այն չշտկված համարելու, այդ հիմքով հայտը մերժելու մասով, ոչ իրավաչափ են և ենթակա են անվավեր ճանաչման: Բացի այդ, ոչ իրավաչափ է նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բանկային

երաշխիքը ստանալու և Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերը նախաձեռնելը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը դա գնում կատարելու նպատակով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն ...

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

2. Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ գնման գործընթացի կազմակերպման նպատակն է պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ, և Օրենքի ցանկացած դրույթ պետք է նախևառաջ մեկնաբանվի այդ նպատակի հաշվառմամբ: Բացի

այդ, գնման ընթակարգում պետք է ապահովվի օրենքի գերակայությունը և բոլոր մասնակիցների հավասարությունը:

Տվյալ դեպքում, մոդելի մատնանշումը հրավերի համաձայն հանդիսացել է ոչ թե պարտադիր պայման, այլ լրացուցիչ, ինչի մասին նշում կա թե հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետում, թե Հավելված 1.2-ում, որտեղ նշվում է, որ մոդելները նշվում են միայն առկայության պարագայում: Ուստի Ընկերության կողմից ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխանող հայց, մասնավորապես հայտի Հավելված 1.2-ում նշել է այն բոլոր սարքավորումների մոդելները, որոնք առկա էին:

Մինչդեռ, Հանձնաժողովը Հայցվորի ներկայացված հայտը՝ սարքավորումների մոդելները չնշելու մասով, անհիմն կերպով գնահատել է որպես անհամապատասխանություն ունեցող, և առաջարկել է շտկել այն:

Ընկերությունը, կարծելով, որ նշված պահանջը կրում է տեխնիկական բնույթ, շտկված տարբերակում մատնաշված տողերում այն մոդելների փոխարեն, որոնք առկա չէին, նշել է հետագայում գնվելիք սարքավորումների հզորությունը, ինչը բավարար հնարավորություն է տալիս համադրել առաջարկվող սարքավորումը հրավերի պահանջներին, այսինքն, ապահովել գնումների գործընթացի անխոչընդոտ ընթացքը և հասնել դրա միակ նպատակին՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Մինչդեռ, Հանձնաժողովը համարել է, որ արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել և անհիմն կերպով, առանց օրենքով նախատեսված հիմքերի, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է այն:

Այս առումով հատկանշական է, որ Ընկերության հայտում, բացի Հանձնաժողովի կողմից արձանագրված տողերի, մի շարք այլ տողերում նույնպես չի նշվել սարքավորման մոդելը, այնինչ նշված տողերի մասով անհամապատասխանություն չի արձանագրվել:

Ավելին, Ընկերությունը նախկինում մասնակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված այլ գնման ընթացակագրին՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5» ծածկագրով, որի շրջանակներում նույնպես հայտում սարքավորման մոդելի փոխարեն նշել է այն հզորությունը, որը պարտավորվում է ապահովել: Նշված հայտը ոչ միայն հանձնաժողովի կողմից ճանաչվել է բավարար, այլև Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Ուստի Հանձնաժողովը ոչ միայն կայացրել է ոչ իրավաչափ որոշումներ, այլև ցուցաբերել է տարբերակված մոտեցում, խախտելով օրենքի գերակայաության և իրավահավասարության սկզբունքները:

Բացի այդ, գտնում ենք, որ ոչ իրավաչափ է նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բանկային երաշխիքը ստանալու և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերը նախաձեռնելը:

Այսպես, վերը նշված իրավական նորմերի համաձայն՝ գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, մասնակցի իրավունքն է: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը՝ մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում: Մասնավորապես, գնման գործընթացի շրջանակում մասնակիցը, ստորագրելով համապատասխան հայտարարություն, ստանձնում է ընդամենը մեկ պարտավորություն, այն է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց հետո ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Բացի այդ, Կարգի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ արձանագրված անհամապատասխանությունը շտկելը նույնպես մասնակցի իրավունք է, այլ ոչ թե պարտականություն:

Հետևաբար, մեր կարծիքով, մասնակիցը չի կարող ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», իսկ պատվիրատուն չի կարող պահանջել իրեն վճարել բանկային երաշխիք, եթե մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Փաստորեն, անկախ այն հանգամանքից, թե Ընկերության կողմից հրավերում որևէ թերություն թույլ է տրվել, թե ոչ, պատասխանողն իրավունք չուներ նախաձեռնել բանկային երաշխիքը ստանալու և Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերը:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ սույն դեպքում Ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ վարքագիծ, նշել է այն բոլոր սարքավորումների մոդելները, որոնք առկա էին, իսկ այն սարքավորումների մասով, որոնց մոդելները առկա չէին, նշել է այն հզորությունը, որը պարտավորվում է ապահովել, ինչը բավարար էր հրավերին Ընկերության հայտի համապատասխանությունը ստուգելու համար, հատկապես, հաշվի առնելով այն, որ մոդելների նշումը հրավերով չի սահմանվել որպես պարտադիր պայման, ինչպես նաև, որ մեկ այլ գնման ընթացակարգում նույն պատվիրատուն սարքավորման հզորության նշումը մոդելի փոխարեն դիտարկել է բավարար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-51-րդ հոդվածներով՝ խնդրում ենք

1.Մասնակի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերության կողմից 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով մոդելները չներկայացնելը որպես հրավերին անհամապատասխանություն գնահատելու մասով, անվավեր ճանաչել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ-ի ժամը 16:30-ին հրավիրված նիստի 2-3 արձանագրության 1.2 կետը:

2.Մասնակի՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերության կողմից 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով մոդելները չներկայացնելու անհամապատասխանությունը չշտկված գնահատելու, որպես հետևանք՝ հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով, անվավեր ճանաչել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ-ի ժամը 16:00-ին հրավիրված նիստի 2-4 արձանագրության 1.1 և 1.3 կետերը:

3.Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից բանկային երաշխիքը ստանալու և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերը նախաձեռնելու գործողությունները»:

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը նիստին, ովքեր պնդել են բողոքը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.01.2022թ. թիվ 02/16.4/761-22 գրությամբ ներկայացրել է բողոքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հավելված N 1.2-ի մասով.

- «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 1-13-րդ, 27-38-րդ, 41-րդ, 81-83-րդ 92-րդ, 96-րդ և 98-րդ տողերով չի ներկայացրել մոդելները,
- «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով չի ներկայացրել մոդելները և 43-45-րդ, 64-65-րդ, 71-80-րդ տողերով տեխնիկական բնութագրերը ներկայացրել է ոչ ամբողջական:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, հետևյալը.

- «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 7-րդ, 9-րդ, 27-28-րդ, 30-33-րդ, 36-38-րդ և 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին
- «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով ներկայացված չեն մոդելները:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲ և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների (հետայսու նաև՝ Ընկերություններ) հայտերը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով 24.01.2022թ. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 31.01.2022թ. թիվ 02/16.4/761-22 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 41-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից

ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հավելված N 1.2-ի մասով.

- «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 1-13-րդ, 27-38-րդ, 41-րդ, 81-83-րդ 92-րդ, 96-րդ և 98-րդ տողերով չի ներկայացրել մոդելները,
- «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով չի ներկայացրել մոդելները և 43-45-րդ, 64-65-րդ, 71-80-րդ տողերով տեխնիկական բնութագրերը ներկայացրել է ոչ ամբողջական:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, հետևյալը.

- «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 7-րդ, 9-րդ, 27-28-րդ, 30-33-րդ, 36-38-րդ և 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,
- «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից 11-17-րդ, 17-ին հաջորդող տողով, 41-42-րդ, 81-82-րդ, 85-87-րդ և 89-97-րդ տողերով ներկայացված չեն մոդելները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա ընկերությունների հայտերը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ սահմանվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է*** շինարարական աշխատանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ***մոդելները (<u>առկայության պարագայում</u>),*** արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում <u>մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների կողմից հայտում՝ մոդելները չներկայացնելու հիմքով, արձանագրելով անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, գործել է Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված N 1.2-ի՝

սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունների կողմից հայտով մոդելների չներկայացնելը չի կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար կիրառելու Կարգի 41-րդ կետով սահմանված շտկում իրականացնելու պահանջը, քանի որ Ընկերությունները տվյալ դեպքում թույլ չեն տվել հրավերով սահմանված պահանջի խախտում:

Միևնույն ժամանակ, վերը նշված հիմնավորումներից ելնելով, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 19.01.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1.3-րդ կետով կայացված որոշմամբ Կարգի 42-րդ կետի համաձայն մերժելով «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը՝ մոդելները չներկայացնելու հիմքով, իսկ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը՝ այն հիմքով, որ վերջինիս կողմից շտկման արդյունքում 7-րդ, 9-րդ, 27-28-րդ, 30-33-րդ, 36-38-րդ և 96-րդ տողերով ներկայացված սարքավորումների մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ դեպքում Ընկերությունների կողմից հայտով ներկայացված Հավելված N 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ ի սկզբանե պետք է իրականացներ Ընկերությունների կողմից մոդելների չներկայացման պայմաններում:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընկերությունների ներկայացված բողոքները սույն մասով հիմնավոր են և ենթակա են բավարարման:

Անդրադառնալով «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ «*դադարեցնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից բանկային երաշխիքը ստանալու գործընթացը*», հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքի պահանջը այս մասով ևս ենթակա է բավարարման, քանի որ սույն որոշման հիմնավորման շրջանակներում «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշման դադարեցմամբ վերանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից բանկային երաշխիքը ստանալու գործընթացի հիմքը:

Ինչ վերաբերում է «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ «*Ոչ իրավաչափ ճանաչել «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ*

ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնելու գործողությունը», ապա հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ մինչև բողոքների քննության ելքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշումը կայացնելն, արդեն իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2022թ. թիվ 26-/26-1/1572-2022 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնվել է «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

24.01.2022թ. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել ամբողջությամբ, իսկ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի համանման բողոքը բավարարել մասնակի.

1.պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տ-Քնսթրաքշն» և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությունների ներկայացրած հայտերի մասով՝

- դադարեցնելու 13.01.2022թ.-ին հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստի 2-3 արձանագրության 1.2 կետով՝ մոդելները ներկայացնելու պահանջը:
- մոդելները չներկայացնելու արդյունքում անհամապատասխանությունը չշտկված գնահատելու, որպես հետևանք՝ հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով, անվավեր ճանաչել 19.01.2022թ. հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստի 2-4 արձանագրության 1.1 և 1.3 կետերը:

2. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. դադարեցնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից բանկային երաշխիքը ստանալու գործընթացը:

4. «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ բողոքի պահանջը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**